

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացը կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-րդ ՏԱՐԻ

20-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՈՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր ստանում ենք սեփական հեռագրերը:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., յոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՔՍԱՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամարյանի տանը):
Կայսերական ռուսի քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:
Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բաժին վճարվում է 2 կոպեկ:
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանց լրագրիների յայտարարութիւնները, մասնաւորապէս կապուստական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնաւորապէս տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս օրը կրկնակի՝ 2 ռուբլի:
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՈՒՆԻ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1892 ГОДЪ

НА ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(девятый годъ изданія)

Въ 1892 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисъ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.
Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяць—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе какъ считая съ перваго числа любого мѣсяца).
Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.
Подписка и объявленія принимаются: Въ Тифлисъ: въ конторѣ газеты, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12.
Въ отдѣленіяхъ и у агентствъ подписка и объявленія принимаются по редакціоннымъ цѣнамъ безъ всякой надбавки. Иногородные адресуютъ свои требованія: Въ Тифлисъ, въ редакцію «Новаго Обозрѣнія».
Лица, подписавшіяся (безъ разсрочки) на годовое изданіе «Новаго Обозрѣнія» 1892 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году со дня подписки.
2—2

ԱՍՏՄԵՆԱԲՈՅԺ
ՀԱՄԱՋԱՍՊ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

ՕՐԻԿԼԻԻ

Սուղակակայա փողոց, սեփական տանը №14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ } առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ.
կիրակի և տօն օրերին } և երկուշաբթի 4 ժամից մինչև 6 ժ.
առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: } 5—150

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թեմական պատգամաւորների ընտրութիւնը. Ռուսաց թատրոն. Նամակ Բաղուխ. Նամակ Մոսկովայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երգչուհի Գործերը. Թափառաչը ինչիս. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒԹԻՒՆԸ

«Արարատ» ամսագրի խմբագրութիւնը, գեղեցիկները համարում տպագրել է հետևեալը, որը արտաստում ենք ամբողջութեամբ:
«Կաթողիկոսական ընտրութիւնների համար ըստ տրամադրութեան Պոփէնիէի, ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր թեմից

ընտրվում են մի մի աշխարհական պատգամաւոր: Տաճկաստանում Սահմանադրութեամբ ճշդիւ որոշված են թէ ընտրողները և թէ ընտրելիները: Հիմնական հակառակութիւնը որ կայ Սահմանադրութեան և Պոփէնիէի միջև: Թեմական պատգամաւորների վերաբերութեամբ այժմ մեծ յոյս կայ, որ նոյն իսկ տաճիկայերի կողմից վերացվի, որովհետև նրանք արդէն զգացել են, առանց կուսակցութեանց խնայողութեան, որ այս կէտում Պոփէնիէի պահանջները անհամեմատ իրաւացի են: Մեր տաճիկայ եղբայրներին մասնաւորապէս այս կէտում ցանկանում ենք աշխրջութիւն և արիւթթիւն: Ինչ վերաբերում է Ռուսաստանի և պարս-հնդկական թեմերին, այս տեղերում մարմնաւոր իշխանութիւնները ամեն դիրքութիւն ընձեռում են ընտրութիւնների կանոնաւորութիւնը երաշխաւորելու համար: Մենք է միմյանց գերապատիւ առաջնորդներին և սրանց փոխանորդ-

ներին ու գործակալ կամ բարեկարգիչ բահաններին հսկել անաւտօրիտեամբ, և առանց որ և է կուսակցական ոգու տալ ժողովրդին ամեն միջոց և հնարաւորութիւն կատարելու իրանց ընտրողական պարտքը խղճի մօտ և ամենայն պատուութեամբ: Դժբաղդաբար մինչև այժմ դեռ չէր կան մանրամասն մշակված կանոններ ժողովրդական ընտրութիւնների վերաբերութեամբ: Այդ ընտրութիւնները կատարվել են և այժմ էլ կատարվելու են ընդունված սովորութեան համեմատ, հոգեւոր իշխանութեան հսկողութեան տակ, որ կարեւոր դէպքում կարող է դիմել և մարմնաւոր իշխանութեան աջակցութեամբ: Մարմնաւոր իշխանութիւնն էլ իր կողմից տուել է առանձին հրահանգներ այդ ընտրութիւնների կատարման վերաբերութեամբ (տես «Արարատ» 1883, երես 480—483): Աւելի ուշադրութեան արժանի է 1884-ի Թիֆլիսի թեմական առաջնորդի № 204 շրջաբերականը, որով առաջին անգամ փորձ է լինում հոգեւոր իշխանութեան ներկայացուցչի կողմից որոշ կանոնների ենթարկել ազգային եկեղեցական բոլոր ընտրութիւնները: Այդ շրջաբերականով առաջադրված կանոնները պարտադիր են եղել վրաստանի և իմերէթի թեմում և այժմ էլ, եթէ չենք սխալվում, գործադրութեան մէջ են: Ուստի և հարկ անհրաժեշտ համարելիք վերապել «Արարատում» այդ նշանաւոր շրջաբերականը, մանաւանդ որ ամեն կողմից հարցեր են լինում մեզ այդ մասին թէ մանաւոր անձինքների և թէ մամուլի («Մշակ») կողմից, ցանկանալով միանգամայն որ ապագայ կաթողիկոսը իր հայրապետական կնիքակով աւելի մանրամասն և բոլոր թեմերի համար ընդհանուր գործաձական հրահանգներ որոշէ, մոտենալով դիտութիւնից մշակված ընտրի ձևերը ընտրողութեանց կանոններում, որով միայն հնարաւոր է արգարութեան և հաւասարութեան սկզբունքների գործադրութեան կատարելապէս իրաւաւորել: Ապագայ կաթողիկոսին է մնում անշուշտ և մի ուրիշ մեծ բարենորոգում ընտրողական գործին վերաբերելու: Այդ աշխարհական պատգամաւորների թեմի համեմատական կացուցանելն է թեմի ընդհանուր ժողովրդի թեմին: Անարգարութիւն է անշուշտ որ օրինակ երևանի պէս մի թեմ, որը մի քանի հարիւր հազար հայ ժողովուրդ ունի, ունենայ մի պատգամաւոր, նոյնպէս մի պատգամաւոր ունենայ և Տաճկաստանի մի յետ ընկած թեմ, որի ժողովուրդը հազիւ մի կամ երկու տասնեակ հազարի է հասնում: Բայց առ այժմ պէտք է ցանկալ անկասկած, տիրող օրէնքի ճշգրիտ գործադրութիւնը, բարեփոխումները սպասելով ապագայից:

ՌՈՒՍԱՅ ԹԱՏՐՈՆ

Տարին վերջացաւ, և եթէ տեղական ռուսաց դրամատիկական խումբը յետ նայի իր այս սէզոնի գործունէութեան վրա, կը տեսնի մի մեծ անաջողութիւն: Ռուսաց ժամանակակից դրամատիկական աղբաւ գրականութիւնը, իր անհորը դրամաներով, կոմիդիաներով և վոգելիւններով, և դրա հետ միասին թոյլ խումբը՝ անկարող եղան թատրոն գրաւել Թիֆլիսի հասարակութիւնը:
Միայն այս տօներին, երբ հասարակութիւնը ձգտումն ունի անպատճառ ներկայացումներ տեսնելու, թատրոնը մի փոքր կենդանութիւն ստացաւ: Վերջին օրերի «Թատրոնական նորութիւններ» են: Օտարովսկու «Տիգրուրոն» ֆէրիան և Տօլստոյի «Плоды просвѣщенія» ուշադրութեան արժանի կոմիդիան: Տօլստոյի այդ պիէսան միմեանց ետեից լի մուտք տուեց, և անկասկած էլի կը տայ, եթէ ներկայացվի: Հասարակութիւնը մի առանձին զուարճութիւն է ըը-

դում, տեսնելով տաղանդաւոր գրողի սուր գրչի գծագրած այն տիպերը և երևոյթները, որոնք կանգնում են ռուսաց կեանքի այժմեան պատկերը...

Եւ ճամբարում Մի քանի ժամ նստելով թատրոնում, տեսնելով 4 գործողութիւնից բաղկացած այդ կոմիդիան, մարդ մի կողմից իր առաջ պատկերացած է տեսնում մի ամբողջ հասարակութեան կատարելապէս դատարկ կեանքը, իսկ միւս կողմից՝ համոզվում է, որ եթէ այդ դատարկ կեանքը շարունակվի, կարող է աւելի և աւելի մեծ չարիքներ առաջ բերել, կարող է դժբաղդացնել մի ամբողջ սերունդ, մի ամբողջ ժողովուրդ: Դուք տեսնում էք ձեր առաջ ժողովրդի արկւն-քրտինքով ապրող ռուս կարուստատիրոջ, տեսնում էք, ոչինչ գործ և զբաղմունք չունեցող երիտասարդութիւն, որի ամենամեծ իդէալը՝ «վելիսլաւեդ» և «չնիւն» են, տեսնում էք արիւստոկրատ օրիորդներ, որոնց օրվայ մրտաճակնքը՝ «կուպլետներ երգելն ու լսելն է», տեսնում էք շրտու, հիւանդոտ, բարոյապէս և մտաւորապէս թուլացած, քայքայված ռուս արիւստոկրատ կնոջ, տեսնում էք, թէ ինչպէս քաղաքային հեշտասեր կեանքը կրնում և ապականում է դիւղական թարմ տարրը, տեսնում էք, թէ ինչպէս լուսաւորված մարդկանց մի ահալին լեզուին, բան ու գործ թողած, առաւօտից մինչև երեկոյ, խելագարվածի նման, դրազված են հիպոսթիզի մեղմաներով, տեսնում էք, վերջապէս ռուս գիւղացուն՝ իր խորին աղքատութեամբ, իր ամբողջ աղքատութեամբ, և տեսնելով այդ բոլորը, դուք քիչ է մնում, որ արտասուէք, յիշելով որ այդ բոլորը բացառութիւններ չեն, այլ իրականութեան ընդհանուր պատկեր...

Տօլստոյի «Плоды просвѣщенія» պիէսան մի բարդ, դրամատիկական կատարելութիւններ ունեցող դրամա է, այլ մի պարզ, անպատճառ պատկեր, որը զեղարուեստական ճշդութեամբ ներկայացնում է ռուսաց հասարակութեան կեանքը, իր բոլոր ծիծաղելի կողմերով:

Եթե ինչ էլ այդ արտադրութիւնը, բայց որքան կսկիծ և վիշտ է թաքնված այդ ծիծաղի տակ... Ի դէպ՝ Հարկաւոր ենք համարում նկատել մի կէտ: Այլի առաջ ունենալով, որ այդ պիէսայի հեղինակը Տօլստոյն է, որը ինչպէս յայտնի է, աւելի ձեռնից բաց չէ թողնում շատ թեւ. արձակել լուսաւորութեան դէմ, շատերը կարող են կարծել, որ այս պիէսայումն էլ հեղինակը հետեւում է իր նոյն նպատակին: Սակայն պէտք է ասել, որ այդ պիէսան, եթէ նոյն իսկ հեղինակը ունեցել է այդ նպատակը, բոլորովին այլ տպագրութիւն է թողնում հանդիսականի վրա: Նա դուռնը է յարուցանում ոչ թէ լուսաւորութեան դէմ, այլ միայն կեղծ, շինծու, չը հասկացվող լուսաւորութեան դէմ: Եթէ պիէսան կարողանար ճշմարիտ ատելութիւն առաջ բերել դէպի եւրոպական լուսաւորութիւնը, այն ժամանակ հարկաւոր կը լինէր ար խիղճը նետել այդ պիէսան:

ՆԱՍՏԱԿ ԲԱՎՈՒՆԻՅ

Դեկտեմբերի 30-ին
Քանի մի տարի է, որ տեղիս հասարակաց կլուբում պարբերաբար լինում են տեղի թէ անտեղի ապտակահարութիւններ, սակայն ոչ մի ապտակահարութիւն այն հետեանք չէ ունեցել, ինչ հետեանք որ ունեցաւ երկու շաբաթ առաջ տեղի ունեցածը:
Թղթալաղի հաշիւների առթիւ Տար... չի ապտակ է տալիս Ե. Պատուականեանցին: Պատճառները ընկնում ընդհանուր ժողովը երկուսին էլ գրկում է անդամակցական իրաւունքից: Պատճառականեանց իր այդ սկանալը բացատրում է ոչ այնքան ժողովականների տրամադրութեամբ, որքան Ե. Ալպանովի ջանքով ու չնորքով, որի հետ տարիներից ի վեր լարված յարաբերու-

թեան մէջ է: Փակագծի մէջ պիտի ասել, որ այս երկրորդ անգամն է Թ. Պատուականեանցի սեռ-նայն ու անդամակցական իրաւունքից զրկվելը մի անգամ էլ մի քանի տարի առաջ են սեռ-ընել, երբ իրան սնանկ է հրատարակել՝ մաքրա-զարդելով, որպէս թէ շատ շատերի փողերը...

Այս անգամ՝ երբ առիթ է ներկայանում կրկին խօսելու Թ. Պատուականեանցի ընդունելու և չընդունելու մասին, Ասլանով, ի միջի այ-լոց, իբր թէ, ոչ միայն նպատակաւոր կարծիք-ներ չէ յայտնում, այլ և մեղադրում է անգամ-ներին, որ Պատուականեանցի պէս մարդուն իրանց մէջ են ընդունել, որ նրա հետ խօսում են ու մարդու տեղ դնում: Սառսիկ վերաւորված այս տեսակ պատմող լուրերից և մի և նոյն ժամա-նակ վրդովված կրտսեր պատահած խայտառակ դէպքից, Պատուականեանցի վնասում է վրէժնեղիւր լինել և ապա մեռնել... Երէկ, ամսին 29-ին, Պատ-ւականեանցի դմում է եկեղեցի, եկեղեցուց էլ զերեզմանատուն՝ կարծեմ — ծանօթ ննջեցեալի համար: Գերեզմանատնից ուղեորվում է քաղաքա-յին դռան, ուր լինում է ժողով ձեռքաշ երկա-թուղու ակցիօներական ընկերութեան: Ժողովին նախագահելիս է լինում Թ. Ասլանով, երբեմն փա-տաքան, այժմ կառավարիչ Հասպեան ընկե-րութեան:

Պատուականեանցի մօտենում է սպանաորու-թեանը նախագահին և ժողովականների ներ-կայութեամբ ատրճանակ է արձակում նրա կրծ-քին, ապա իրան է ուղղում, որից անմիջապէս մեռնում է ինքը... Ասլանով թէ և դեռ կենդանի է, բայց վտանգաւոր կերպով վերաւորված է: Հանգուցեալն ունի 10-ամեայ մի մանուկ միայն. ունի բաւական կարողութիւն և կարուածներ:

«Թատրոնական ֆոնդ» կազմելու համար կոչ-ված յանձնաժողովը երկի, ամսին 29-ին առաջին նիստն ունենալով՝ որոշել է աշդեցնել քանի մի ներկայացուցիչներ: Առաջին ներկայացման համար — չունենալով պատմական մի յարմարագոյն պիէ-սա — ընտրել է «Ռուզան» պիէսան:

Ամսին 27-ին կայացաւ մասնաւոր վազմատե-րերի ժողովը, ուր վերջնականապէս յայտարար-վեց, վաղուց լավուր, տեղուրեան կարգադրու-թիւնը: Տէրութիւնը գին է ցանկանում մասնա-ւոր մարդկանց վազմաները, որոնց թիւը 3500-ի է հասնում: Ամին մի վազմն նստել է 1850 թ., այն օրվանից սկսած՝ երբ վազմը գծի վրա է դրված, վազմատեղը վերստին 2 կ. նպաստ է է ստացել երկաթուղու վարչութիւնից, բացի այս նպաստից, վազմատեղը վարձով էլ է տուել, ընդամենը՝ այստեղից Բաթում, 12—20 թ.: Եթէ հաշ-ւելու լինենք ամսական մի վազմի համար 1 1/4—2 թէյս, կը նշանակէ վազմատեղը ամսական մի վազմից միջին թիւով ստացել է 15—25 թ. կամ 24—40 թ. մէկ, 20 թ.—20 կ. կամ 33 թ. 60 կ. (2 կ.×840 վերստ) էլ երկաթուղու վարչու-թիւնից... ասել է ամսական մօտաւորապէս 50—70 թ. իւրաքանչիւր վազմից:

Այժմ տէրութիւնը կարգադրել է գին հետեւեալ որոշումով. տարեկան 250 թ. դեղձ հաշւել սկսած այն տարվանից, երբ վազմը գործածութեան մէջ է դրվել — ապա մնացածը վճարել. — եթէ վազմը 5 տարի է, որ գործ է ածվում, կը նշանակէ 5×250 թ. դուրս գալով վազմի արժէքից՝ 1850 թուրքուց, պիտի վճարել մնացածը՝ 600 թուրքի: Զանազան երկաթուղիներից հարկադրված ժո-ղովականների մեծամասնութիւնը համաձայնից առաջիկայ յունվարի 1-ից վաճառելու. անհա-մաձայն գտնվեցան միմիայն 600 վազմի տէ-րերը...

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅ

Դեկտեմբերի 22-ին

Դեկտեմբերի 16-ին Մոսկովայի կայսերական Հնագիտական ընկերութեան արեւելեան մասի ժո-ղովում պ. Ս. Սարգսեան կարգաց իր ղեկու-ցումը Ռուսացիների՝ Ռոստովի մասին պատմած աւանդութեան մասին: Պ. Ս. Յովհաննիսեանն էլ կարգաց Թեոփոսիայի երկու հայ եկեղեցիների պատերի վրա գտնված լաւաքարերի մասին: Այդ լաւաքարերը վերագրում են XIV—XVI դարե-րին և ըստ պ. Յովհաննիսեանի պէտք է որ ու-րիշ տեղերից բերված լինեն: Երկու զեկուցումներն էլ լավիցին հետաքրքրութեամբ և բաւական տաք վիճաբանութիւններ յարուցին: Նոյն շաբթիւն, այն է դեկտեմբերի 20-ին կայացաւ կայսերական Հնագիտական ընկերութեան ընդհանուր ժողովը,

որին ներկայ էր և ընկերութեան պատուաւոր անդամ, Մոսկովայի գեներալ-նահանգապետ Մեծ Խլան Սերգի Ալեքսանդրովիչ: Պ. պ. Ս. Օրէշնի-կով և Ա. Շվարց կարգացին հարաւային Ռուսաս-տանում Պարուշինա գիւղում գտնված ինչ որ հնու-թիւնների մասին. այնուհետեւ պ. Ս. Վ. Նիկոլսկի կարգաց մի ղեկուցում, որը պէտք է շատ հետա-քրքրի և մեղ հայերին ընդհանրապէս «Ваня и его НАДПИСИ» — վան և նրա արձանագրութիւնները: Պ. Նիկոլսկի, ինչպէս երևում է, շատ սիրով է վերաբերվել դէպք իր ընտրած ղեկուցման նիւ-թը: Նա կարգացել է եւրօպական բոլոր հետադո-տութիւնները վանի և նրա մէջ եղած արձանա-գրութիւնների վերաբերմամբ: Հետեւապէս նա հեր-ջում է Մովսիս Խորենացու պատմածը՝ թէ վան հիմնել է Ասորոց Շամիրամ թագուհին, վա-նի արձանագրութիւնները գրված են այնպիսի լեզուով, որը մինչև օրս յայտնի չէ գիտականնե-րին. նրա մասին շատ տարբեր կարծիքներ կան. մի քանիսը, ինչպէս Շուլց, Լայարդ, Բորեր, այդ լե-զուն դասում են հին ասորական լեզուի շարքում, Մորթման նրանց համարում է գրած հայերէն. իսկ Ֆրանսիական յայտնի գիտական Գլուար 1880 թ. ակնարկ և երկու տարուց յետոյ Միւլլեր այդ բեւեռագիրները համարում են հին վրաց լեզուով, որոնք իբր թէ հին ժամանակներում ապրում էին այժմեան Հայաստանում: Այժմ միայն կարելի է ասել, որ վանի արձանագրութիւնները պատկա-նում են Գրիտտոսից առաջ X և IX դարերում ապրող մի շարք թագաւորներին: Պ. Նիկոլսկի ժո-ղովին ներկայացրեց իր ձեռքով արտագրած միւ-նի այժմս յայտնի բոլոր արձանագրութիւնները: Նա խօսեց նոյնպէս Պարսկաստանում և Տաճկաս-տանում գտնվող ուրիշ բեւեռագիրների մասին. այնուհետեւ նա ուղեց անցնել այն բեւեռագիրնե-րին, որոնք գտնվում են ուսական Հայաստա-նում, բայց ժամանակը ուշ լինելու պատճառով ղեկուցումը ընդհատվեց: Միւս ժողովում կը լինի ղեկուցման շարունակութիւնը, որի ժամանակ, ի հարկէ, պ. Նիկոլսկի կը յայտնէ իր որոշ կարծի-քը այդ բեւեռագիրների մասին և կը լինեն մի-ճաբանութիւններ: Ինչ և իցէ, վանի և ուրիշ ար-ձանագրութիւնների ուսումնասիրութիւնը վեր-ջապէս լոյս կը ձգէ Հին-Հայաստանի պատմու-թեան վրա, որը մինչև այժմ պատած է մոռու-նի, չնորհիւ Խորենացու կրօնական և ազգասիրական առասպելներին:

Դեկտեմբերի 21-ին Մոսկովայի Գերմանական Ժողովարանում կայացաւ սովորական հայկական երեկոյթը: Սիրողները խաղացին Տէր-Գրիգորեա-նի «Վոյ քի իմ վէշեր» օլոզվիլը, որը բաւա-կան թոյլ անցաւ: Այնուհետեւ պ. Ա. Կորնչ-չենկոյի կառավարութեամբ կայացաւ երաժշտա-կան մասը. պ. Կորնչչենկո բաւական տաղանդա-ւոր երիտասարդ է, որին երաժշտական կրիտի-կան փայլուն ապագայ է խոստանում: Այս քա-նի ժամանակ էլ նա զբաղված է հայկական եր-գերը կանոնաւոր եւրօպականին ներածելով. նրա ներդաշնակութիւնը թէ և շատ էլ հարուստ չէ, բայց այնու ամենայնիւ հայկական կօրով ունի: Այդ երեկոյ երգեցին «Պաղ աղբիւր» և «Վոլիկ» երգերը տնօրի և խօրի համար գրված, «Այծեամ» խօրի համար գրված, «Վոլուկ» տնօրի համար գրված, «Չէլթունցոց մարչ» տնօրի և խօրի հա-մար գրված և վերջապէս «Չմուռն անցաւ» սօսդ-րանօի և խօրի համար գրված: Աւելի անող պէտք է համարել «Չէլթունցոց մարչը»: Տնօրի պար-տիան երգում էր պ. Կոստանեանց, իսկ սօսդ-րանօն՝ օր. Սօկրովա. պ. Կոստանեանց սովո-րում է այժմ տ.տ. Կլեմենտիևի և Կորգանովի ու-սումնարանում, իբր հանգուցեալ Կորգանովի ա-նուհետ ստիպանդիտու. նրա ձայնը, մասնաւոր-բարձր երգեստում բաւական զուրկական է. օր. Սօկրովա տ. լավօրովայի աշակերտուհին է: Պէտք է շնորհակալ լինել յարգելի օրիորդից, որ նա դուրս է եկել երգելու իրան համար միան-գամայն անձնութ լեզուով. թէ օր. Սօկրովա և թէ պ. Կոստանեանց աջողութիւն ունեցան: Խօրը կազմված էր ուսանողներից և գործը նրանց հա-մար նոր լինելու պատճառով չէ կարելի ասել, որ երգում էին շատ էլ ներգրանջալի: Օրիտարը, որ բաղկացած էր 60 հոգուց, կազմված էր մա-տամբ ուսանողներից, մասամբ էլ կողմնակի անձնաւորութիւններից. ամում էր համեմատա-բար ներդաշնակ: Բացի երգերից նա ամեց մենակ և Կորգանովի «Բայաթին», որը յար-մարեցրած է օրիտարին շատ անաշող կերպով պ. Լադուխինի ձեռքով. պ. Կորնչչենկո ստացաւ

մի դիրիժօրական գաւազան: Երաժշտական մա-սից յետոյ յայտնի նկարիչ պ. Շիլօվսկի զրեց 4 կենդանի պատկերներ հայկական կենքից ա-ռած. 1) Հայ աղջիկներ գալիս են աղբիւրից սա-փորներով ջուր տանելու, այդտեղ Սայաթ-Նօվա գրաւում է նրանց իր երգերով. 2) Հայկական հարսանիք. 3) Շամիրամ և Արա գեղեցիկ և 4) Գրգերի յարձակումը հայ գիւղի վրա: Կենդանի պատկերները մեծ աջողութիւն ունեցան, մասնա-հարսանիքը: Պ. Շիլօվսկին մատուցվեց մի արծա-թէ տուփ: Այնուհետեւ անցին լեզգիական և ուրիշ կովկասեան պարեր, որից յետոյ սկսեցին եւրօ-պական պարեր: Երեկոյթը միանգամայն աջող-ված պէտք է համարել և մուտքի կողմից. դաշի-ճը կատարելապէս լի էր: Աֆիշաներ և ծաղիկներ ծախում էին տ.տ. Ժամհարանցները և բաւական մեծ գումար կարծեմ հաւաքվեց:

N—0

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Եվպատորիա, դեկտեմբերի 13-ին
Օրբադարի բնակիչ վաճառական Գարութիւն Աւետիսեան Արաբեան, որը վախճանվեց 30 սեպտեմբերի 1873 թուականին, 73 տարեկան հասակում, ինքն անդաւակ լինելով, բոլոր իր ու-նեցած շարժական և անշարժ կալուածները, ար-դէն իր կենդանութեան ժամանակ թողեց իբր ժա-ռանգութիւն ազգիս այն պայմանով, որ իր մահ-վանից յետոյ Օրբադարում ունեցած իր բոլոր անշարժ կալուածները բերած ամբողջ եկամուտը, նոյնպէս շահեցվուր համար թողած գումարի տոկոսները կէսը տրվի կնոջը, իսկ միւս հաւա-սար կէսը աւելացվի դրամագլխի վրա շարունակ, մինչև կնոջ մահը, իսկ նրա մահուանից յետոյ փոխա-ղով արժուի բանկը, ուր պէտք է մնայ 33 տարի շարունակ, առանց դիպչելու. ոչ դրամա-գլխին և ոչ նրա բերած տոկոսներին. 33 տարի ժամանակը լրանալուց յետոյ Օրբադարում իր թողած առան մէջ պէտք է բացվի, թեմանակ իշ-խանութեան կարգադրութեամբ և նրա հակողու-թեամբ, մի երկսեռ դպրանոց իր և իր կնոջ անուամբ, ուր պէտք է ուսում առնեն ազգիս որը և աղքատ երկսեռ մանուկները, որքան նե-րն դրամագլխից ստանալի տոկոսները: Դրամա-գլուխը պէտք է մնայ բանկում, իբր ազգի սե-փականութիւն, ինչպէս և անշարժ կալուածքը Օրբադարում: Հանգուցեալը դեռ կենդանութեան ժամանակ ինքն որոշած էր հինգ հոգի կտակա-կատարներ:

1873-ին հոկտեմբերի 7-ին՝ Գարութիւն Արա-բեանի մահվանից յետոյ անմիջապէս ժողովե-ցանք մեքը կտակակատարներս հաշիւներն ընդու-նելու և գտանք հանգուցեալից մնացած թէ զուտ փող, թէ տոկոսով կամ առանց տոկոսի իր ձեռքով տրված փողերի մուրհակներ, տոմսակ-ներ, ընդամենը թիւ 131 թ. 1 կ.: Այդ գումարից հանգուցեալի թողած, կտակով վաւերացնելու և ուրիշ հարկաւոր տեսնված ծախսերի համար ծախսված 801 թ. 99 1/2 կ. հանելուց յետոյ, ինչ-պէս երևում է հաշիւմատներում, մնացած գու-մարը, թէ փողով և թէ տոմսակներով կամ մուր-հակներով 1874-ին յանձնվեց ինձ, որ բոլորը հաւաքեմ, կարգի բերեմ շահեցնելու համար, և կտակի գորութեամբ, շահեցնելով փողի, կամ պարզ ասել, տոկոսների կէսը յանձնեմ փոխի Արաբեա-նին և միւս կէսը աւելացնեմ դրամագլխի վրա, և բոլոր գործողութիւնս և հաշիւներս նօտարա-կան կերպով վաւերացրած՝ իւրաքանչիւր տարի ներկայացնեմ ում հարկն է: Այս կերպով սկսեցի բոլոր ջանքովս աշխատելու մէկ կողմից հաւաքել փողերը, միւս կողմից նորից տոկոսով շահեցնե-լու մուրհակները Գանգաղ էին հաւաքվում փողե-րը և դրա պատճառը հանգուցեալն ինքն էր, որը իր ձեռքով տուած էր պատուաւոր մի անձի 5 տարի ժամանակով 13,700 թ. և այդ էր գլխաւոր պատճառը գործը տարիներով յետաձգվելու: Յաւով արաի խոստովանում եմ և այն, որ հան-գուցեալի ձեռքով տրված փողերը բոլորը հաւա-քելու հնար չեղաւ, և մի բանի անձանց վրա բոլոր-վին կորան, որը յայտնված է արդէն հաշիւմա-տների մէջ և ընդունված բոլոր կտակակարներից: Վերջիւնեալ 31.131 թ. 1 կ. գումարից, բոլոր ծախսերը դուրս գալով, կարողացաւ հաւաքել մինչև 1879 թուականը 28,205 թ. 50 1/2 կ. այս-պէս շարունակելով կարողացայ մինչև այժմ դուռ արդիւնք հանել 65,269 թ. 31 կ., որի կէսն՝ ըստ զօրութեան կտակին՝ 32,634 թ. 65 1/2 կ. ժամա-նակ առ ժամանակ յանձնած եմ փոխի Արաբեա-

նին, միւս հաւասար կէսը աւելացրած եմ դրամա-գլխի վրա: 1891-ին նոյեմբերի 30-ին Օրբադար քաղաքում բոլոր հաշիւները ներկայացրի միւս-կտակատարներին, որոնց ստորագրութեամբ հա-շուեմատեանի մէջ երևում է, որ հանգուցեալ պարոն Արաբեանի թողած գումարը հասնում է այժմ 60,840 թ. 16 կ.:

Ուրեմն պարտք եմ համարում հասուցանել ի-գիտութիւն ազգայնոցս և մասնաւոր տեղիս հո-գևոր իշխանութեան, որը գրեթէ 18 տարվայ ժամանակամիջոցում առաջին անգամ պահանջած է Օրբադարի քահանայից տեղեկութիւն այդ կտա-կի մասին:

Յակոբ Սէֆերեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Պարտաւորութիւն ենք համարում յայտնել, որ ինչպէս միշտ, այս տարի էլ, սեռ չենք ուղարկել «Մշակի» առաջին համարը թէ Թիֆլիսի և թէ օտար քաղաքների այն բաժանորդներին, որոնք կամ չեն նորոգել իրանց բաժանորդագրութիւնը կամ գոնէ չեն յայտնել մեր լրագրիչը ներկայ թիւն ստանալու ցանկութիւնը:

ԲԱՐՈՒԻՑ մեզ հաղորդում են և հետեւեալ մաս-րամասնութիւնները այդտեղ պատահած սպանու-թեան մասին: «Այսօր, դեկտեմբերի 29-ին, կէս-օրից յետոյ ժամի 2-ին, տեղիս Դոմայի դահլիճում հետեւեալ տխուր դէպքը պատահեց: Կոնկայի հաբ-ցին վերաբերեալ ընդհանուր ժողովի ժամանակ, երբ արդէն դահլիճը լի էր հասարակութեամբ, վիճաբանութեան ժամանակ, տեղիս յայտնի հա-րուստներից մէկը՝ Գովհաննէս Պատուականեանց, յանկարծ տեղից վեր է կենում, ատրճանակը ե-րեք անգամ պարպում կասպեան ընկերութեան կառավարիչ Պետրոս Ասլանեանցի վրա և մահա-ցու կեպով վերաւորում. երբ Ասլանեանց ընկ-նում է դետին, կարծելով որ նա մուռա, ինքն ատրճանակը ուղղում է իր ճակատին և վերջ տա-լիս իր կենքին: Ասլանեանց դեռ կենդանի է և հոգեւոր դրութեան մէջ. բժիշկներն ասում են, որ ապրելու յոյս չը կայ՝ երկուսն էլ պատկանում են իրանկիցէնտ դատակարգին: Ասլանեանց համա-լսարանական է և յայտնի է իր չիտակութեամբ: Իսկ Պատուականեանց լաւ համբաւ չունէր քա-ղաքիցների մէջ, չը նայած որ բարձր շրջանին էր պատկանում. նոյն իսկ նրա հարստանալու պատճառը բոլորին յայտնի էր, որի համար մի-տարի բանտ նստեց: Այսանութեան պատճառը վերադրում են նրան, որ բանի օր արանից ա-ռաջ Պատուականեանցին, կտրել անգամութիւնից արտաքսել են մի սկանդալի համար, և այդ ար-տաքսելու պատճառ երդոններից մէկը եղել է Ասլանեանց, իբրեւ կուրբի ստալշինա»:

Գունվարի 9-ին լինելու է մեր հայոց բնմի դե-րասան պ. Տէր-Պետրոսեանի ընկիճիւրը: Ներկա-յացնելու են Շէկապրի «Սոսլլա» պիէսան: Զան-կալի է որ հայ հասարակութիւնը իր ներկայու-թեամբ քաջալերէ պ. Տէր-Պետրոսեանին, որը մեր բնմի լաւ, խղճատու և տոկուն օյժերից մէկն է:

Մեզ դրում են ԲԱՐՈՒԻՑ, որ դեկտեմբերի 28-ին Թաղիկի թատրոնում մեր հայ երգիչները՝ պ.պ. Մաղմախ և Եղիաշեան, օրիորդ Գեորգեանի մասնակցութեամբ, ներկայացրին Գուհի «Յա-ռուստ» օպերայի երկու գործողութիւն: Թատրոնը կատարելապէս լի էր և հասարակութեան մէջ բացի հայերից նկատվում էին և մի քանի հետա-քրքրվող օտարազգիներ: Երգիչները մեծ աջողու-թիւն ունեցան, օրիորդ Գեորգեան շատ շնորհալի էր Մարգարիտայի դերում: Հասարակութեան ո-գեւորութիւնը մեծ էր: Հասարակութիւնը խնդրեց երգիչներին կրկին մի ներկայացում տալ, սակայն նրանք չտալով և էին Թիֆլիս վերադառնալ: Օ-տարազգիներից շատերը այն միջոցն էին յայտնում թէ հայոց լեզուով օպերան շատ լաւ էր հնչում: Յանկալի է որ Թիֆլիսի Արեւմտական թատրոնի վարչութիւնը մի երեկոյ դիջանէր մեր երգիչնե-րին, որպէս զի նրանք այստեղ էլ կարողանային կրկին «Յառուստ» օպերան: Թիֆլիսի հայ հասա-րակութիւնը անհամբերութեամբ սպասում է այդ ներկայացման:

«Մշակի» ներկայ համարում տարւում ենք մի-նամակ Բագրից, որից ընթերցողը կը ծանօթա-նայ այն ցաւալի անցքի հետ, որը պատահել է

1-2

2-2

4—6

1-15

3-52

55—150

2-20 (7)

3 - 3

Ծախսվում է ուսաց կայսերութեան բոլոր ծաղաքներում: ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏ ձրխադս է ուղարկվում: 5-5 (2) № 1

9—10 (L. 2.)

5-16 (2.)

14—20